ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (094)280239 sipanik@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 31

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սիփանիկ համայնքի ավագանու թիվ 9 նիստի օրակարգը.

1.Սիփանիկ համայնքում 2019թ տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին

2. Սիփանիկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, համայնքապետարանի աշխատակազմի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին

3. Սիփանիկի համայնքապետարանի աշխատակազմի առանձին համայնքային ծառայողներին հավելավճարի կարգ սահմանելու մասին

4.Սիփանիկ համայնքի 2018թ բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ Կողմ
2. ԽՈՍՐՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ Կողմ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԱՆ Կողմ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Կողմ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵԼԻԿՈ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (094)280239 sipanik@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 32-Ն

ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-ի 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստա Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով

ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել Սիփանիկ համայնքում 2019թ-ի համար հետևյալ տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 500000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրա

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվոr դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքեր գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն

կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25000 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 7500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 23000 դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 170 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 5000 դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ,

դ. խաղատների համար՝ 500000 դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 250000 դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ 70000 դրամ.
10) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 25000 դրամ.
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար1000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.
11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 դրամ,
գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,
դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ,
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝ 187.5 դրամ
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝ 75 դրամ
15) Սիփանիկ համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.
16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ.
17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 250000 դրամ.
18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1125000 դրամ,
բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.5 մլն դրամ,
գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3.5 մլն դրամ,
դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 մլն դրամ.
19) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 50000 դրամ.

2. Սահմանել Սիփանիկ համայնքում 2019թ-ի համար հետևյալ տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փաստաթղթով հիմնավորված ծախսերի փոխհատուցման վճար.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 2000 դրամ փոխհատուցման վճար.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

8) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը սահմանել

ա. կենցաղային աղբի համար՝ յուրաքանչյուր բնակչի համար՝ 80 դրամ

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ

գ. Իրավաբանական անձանց համար սահմանել հետևյալ սակագները. Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 1 քմ-ի համար 20 դրամ,

արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 1 քմ-ի համար 5 դրամ,

կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ՝ 1 քմ-ի համար 2 դրամ

հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ -10 դրամ

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 500 դրամ փոխհատուցման վճար.

10) Սահմանել համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների ցանկը և գնացուցակը.

ա. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն 500 դրամ

բ. Ծննդօգնություն

Թեթև միջամտություն 1000 դրամ

Ծանր միջամտություն 5000 դրամ

գ. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ յենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից /բացառությամբ՝ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահանաչարակային միջոցառումների/-

մանր կենդանի 200 դրամ,

խոշոր կենդանի 300 դրամ

դ. կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար-500 դրամ

ե.Ախտահանություն - 1քմ 100 դրամ

զ. միջատազերծում/դիզինսեկցիա/- 1քմ 100 դրամ

է. Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ - 1քմ 100 դրամ

ը. արհեստական սերմնավորում- 5000 դրամ

թ. Կենդանու հերձում

մանր կենդանի 1000 դրամ

խոշոր կենդանի 3000 դրամ
ժ. Կենդանու բուժում- յուրաքանչյուր այցելությունը 1000 դրամ
ի. Կենդանիների նախասպանդային զննում `
մանր կենդանի-500 դրամ
խոշոր կենդանի- 1000 դրամ

Սույն որոշման 1-ին կետի դրույքաչափերին կիրառվել է 0.5 գործակից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ԽՈՍՐՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵԼԻԿՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆՏ ԳԵԿՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (094)280239 sipanik@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 33

ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով՝

Սիփանիկ համայնքի ավագանին որոշում է

1.Սահմանել համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 186000 դրամ, 2019 թվականի համար:

2. Հաստատել 2019թ-ի համար համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը.

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|---|---|---|
| Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 152400 |
| Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 137100 |
| Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 123400 |
| Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 115000 |

| | | |
|---|---|---|
| Պահակ | 1 | 85000 |
| Հավաքարար | 1 | 78800 |
| Անասնաբույժ | 0.5 | 37000 |

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ Կողմ
2. ԽՈՍՐՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ Կողմ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԱՆ Կողմ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Կողմ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵԼԻԿՈ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՍՀՄՍՏ ՍՄՐԳ ՍՐԲԱՆԻԿԻ ՅԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ 03801676

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (094)280239 sipanik@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 34

## ՍԻՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին բ կետի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետով.

ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Սիփանիկի համայնքապետարանի աշխատակազմի ավելի բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողներին 2019թ համար սահմանել հավելավճար աշխատավարձի դրույքաչափի 5 %-ի չափով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ Կողմ
2. ԽՈՍՐՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ Կողմ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԱՆ Կողմ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Կողմ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵԼԻԿՈ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍԻՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ *03801676*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (094)280239 sipanik@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 35-Ն

## ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

Սիփանիկ համայնքի ավագանին Որոշում է

Սիփանիկ համայնքի 2018թ բյուջեում Կատարել հետևյալ փոփոխությունները.

Վարչական բյուջե

Ծախսային մաս

11.1.2 Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ դասակարգման 4891 պահուստային միջոցներ հոդվածից պակասեցնել 48700 դրամ

8.2.4 այլ մշակութային կազմակերպություններ դասակարգման 4269 հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածից պակասեցնել 93000 դրամ

6.4.1 արտաքին լուսավորություն դասակարգման 4251 շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում հոդվածի գումարից պակասեցնել 57000 դրամ

1.1.1 օրենսդիր գործադիր մարմին դասակարգման 4111 աշխատավարձ հոդվածի գումարին ավելացնել 13800 դրամ

1.6.1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 4241մասնագիտական ծառայություններ հոդվածի գումարին ավելացնել 184900 դրամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ Կողմ
2. ԽՈՍՐՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ Կողմ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԱՆ Կողմ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Կողմ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵԼԻԿՈ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ